ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03» մայիս 2018թ. No 641-Ա

ԲԱՑ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ՋՐԻ ՈՐԱԿԻ (ՄԻԿՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 13-րդ կետի 15-րդ ենթակետը և 23-րդ կետի 10-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ «Բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի որակի (միկրոկենսաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշներով) մոնիթորինգի իրականացման 2018 թվականի ծրագիրը» համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ Ռուբեն Գրիգորյանին, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի տնօրեններին, բացառությամբ՝ «Գեղարքունիք» մասնաճյուղի,

1) Ապահովել «Բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի որակի (միկրոկենսաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշներով) մոնիթորինգի իրականացման 2018 թվականի ծրագրի» իրականացումը:
2) Փոփոխությունների բացակայության պարագայում՝ «Բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի որակի (միկրոկենսաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշներով) մոնիթորինգի իրականացման 2018 թվականի ծրագրի» դրույթները դարձնել շարունակական:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Նունե Բակունցին:

Ա.ՎԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարության
«Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպության
գլխավոր տնօրենի
03.05.2018թ № 641-Ա հրամանի

ԲԱՑ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ՋՐԻ ՈՐԱԿԻ (ՄԻԿՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

1. Բաց ջրամբարների ռեկրեացիոն (հանգստի և լողի) գոտիների հատվածներում ջրի որակի (միկրոկենսաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշներով) մոնիթորինգի իրականացման 2018 թվականի ծրագրի (այսուհետ՝ մոնիթորինգի ծրագիր) նպատակն է բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի որակի նմուշառման և լաբորատոր հետազոտությունների իրականացման միջոցով գնահատել սանիտարահամաճարակային անվտանգությունը և կանխարգելել օգտվող ազգաբնակչության շրջանում ջրի աղտոտման հետևանքով վարակների առաջացումը և տարածումը:
2. Մոնիթորինգի ծրագիրը նախատեսված է՝
   1) ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի (այսուհետ՝ Մասնաճյուղեր) կողմից ՀՀ բնակավայրերում առկա բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի նմուշների մանրէաբանական, մակաբուծաբանական և սանիտարաքիմիական հետազոտությունների իրականացման,
   2) ջրի աղտոտվածության մակարդակի գնահատման, համաճարակային իրավիճակի և առողջության համար ռիսկերի բացահայտման, վերլուծություն

իրականացնելու և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական ապարատին ներկայացնելու,

3) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական ապարատի կողմից արդյունքները ամփոփելու, և ՀՀ առողջապահության նախարարություն՝ հաջորդիվ շահագրգիռներին առկա խնդիրները և համապատասխան առաջարկությունները ներկայացնելու համար:

3. Մոնիթորինգի ծրագրի նախապատրաստական փուլում նմուշառման կետերի ընտրության նպատակով Մասնաճյուղերը գույքագրում են բնակավայրերում առկա ռեկրեացիոն գոտիները՝ նշում են տեղակայման հասցեները, եթե առկա է գոտին շահագործող տնտեսվարող՝ գոտու անվանումը: Որոշվում են նմուշառման ենթակա կետերը և տեղեկատվությունը ներկայացվում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական ապարատին՝ մինչև սույն թվականի մայիսի 13-ը:

4. Սույն թվականի հունիսի 1-ից սկսվում է բաց ջրամբարների ռեկրեացիոն գոտիների հատվածներում սահմանված կետերում ջրի որակի մոնիտորինգը՝ յուրաքանչյուր 10 օրը 1 անգամ հաճախականությամբ՝ մինչև սեպտեմբերի 30-ը (սանիտարաքիմիական հետազոտությունները ամիսը 1 անգամ հաճախականությամբ, ռեկրեացիոն գոտիների հատվածներում սահմանված կետերի ցանկը ներկայացվում է աղյուսակ 2-ում):

5. Ռեկրեացիոն գոտիների հատվածներում ջրի նմուշների մանրէաբանական, մակաբուծաբանական և սանիտարաքիմիական հետազոտությունների իրականացման ցուցանիշները և անվտանգության նորմերը բերվում է աղյուսակ 1-ում:

6. Ռեկրեացիոն ջրօգտագործման ջրային ռեսուրսները համարվում են աղտոտված, և ռեկրեացիոն նպատակներով ոչ պիտանի, եթե ջրի հետազոտության արդյունքում հայտնաբերվել են աղիքային վարակիչ հիվանդությունների

հարուցիչներ և հելմինթների կենսունակ ձվիկներ, աղիքային ախտածին միաբջիջների կենսունակ ցիստեր: Նման դեպքերում համապատասխան մարմինների (ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ) պատասխանատուներին ներկայացվում է առաջարկություն՝ տվյալ հանգստի գոտում «լողը և այլ նպատակներով ջրօգտագործումը արգելվում է» բովանդակությամբ ցուցանակ փակցնելու և լողը արգելելու ուղղությամբ հսկողություն սահմանելու վերաբերյալ:

Աղյուսակ 1

Ցուցանիշներ	Ռեկրեացիոն ջրօգտագործում
Կախված մասնիկ	Տնտեսական գործունեության տարբեր տեսակներից կեղտաջրերի արտահոսքի ժամանակ հսկողական կետում չի ավելանում բնական ֆոնի համեմատ, ավելի քան 0.75 մգ/դմ^3 Եթե ջրային օբյեկտը բնականից պարունակում է 0.30 մգ/դմ^3 ավել կախված մասնիկներ, թույլատրվում է ավելացնել դրանց տոկոսը մինչև՝ 5%
Լողացող խառնուրդներ	Մակերեսին չպետք է լինի նավթամթերքի թաղանթ, չպետք է պարունակի ոչ բնական ծագման՝ մարդու տնտեսական գործունեության ընթացքում առաջացած կախված նյութեր և մասնիկներ՝ խեժի, հանքային յուղերի մնացորդներ, լողացող մասնիկներ, ինչպես օրինակ՝ փայտ, պլաստմասսե իրեր, ապակի, ռետինե նյութեր կամ այլ աղբ
Գունավորում	Չի հայտնաբերվում 10 սմ սյունում
Հոտ	Ջուրը չի ունենում 2 բալից ավել ինտենսիվությամբ հոտեր, որոնք ի հայտ են գալիս անմիջապես
Ջերմաստիճան	Կեղտաջրերի արտանետումների արդյունքում ջրի ջերմաստիճանը տաք եղանակին չպետք է բարձրանա 3 C^0-ով, վերջին 10 տարիների տաք եղանակի միջին ամսական ջերմաստիճանի հետ համեմատած
Ջրածնային ցուցիչ (pH)	6.5-8.5 սահմաններում
Լուծված թթվածին	Ոչ պակաս, քան 4 մգ/դմ^3, տարվա ցանկացած եղանակին, մինչև ժամը 12^{00}վերցված նմուշում
Թթվածնի կենսաքիմիական պահանջ՝ ԹԿՊ$_5$	20 C^0-ում չի գերազանցում 4 մգ O_2/դմ^3

Թթվածնի քիմիական պահանջ՝ ԹՔՊ,	Չի գերազանցում 30 մգ O_2/դմ^3
Աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ	Չի հայտնաբերվում
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	Ոչ ավել քան 500 ԳԱՄ (գաղութ առաջացնող միավոր) /100 մլ-ում
Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ	Ոչ ավել, քան 100 ԳԱՄ (գաղութ առաջացնող միավոր) /100 մլ-ում
Կոլիֆագեր	Ոչ ավել քան 10 ՎԱՄ (վահանակ առաջացնող միավոր) /100 մլ-ում
Հելմինթների կենսունակ ձվիկներ, աղիքային ախտածին միաբջիջների կենսունակ ցիստեր	Չի հայտնաբերվում 25 լիտրում
Քիմիական նյութեր	Չի գերազանցում սահմանված ՍԹԿ (սահմանային թույլատրելի կոնցենտրացիա)-ները

Աղյուսակ 2

ՀԱՍՑԵԱԿԱՆ ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետությունում բաց ջրամբարների ռեկրեացիոն հատվածներում նմուշառման կետերի

մասնաճյուղ	**բաց ջրամբարների ջրերի նմուշառման կետեր**
«Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղ- 31 կետ	Հրազդան գետ- ԵՐՀԿ-պոմպակայանի մոտ 2.Հրազդան գետ -Մանկական երկաթգծի մոտ 3.Հրազդան գետ-«Հրազդան» մարզադաշտի մոտ 4.Հրազդան գետ - «Գետափ» ռեստորանի մոտ 5.Հրազդան գետ -«Միերի հրաշք» սրճարանի դիմաց 6.Հրազդան գետ -«Բարդիներ» սրճարանի մոտ 7. Հրազդան գետ -«Արջանոց» սրճարանի մետ 8. Բրյուսով 80 ջրանցք 9. Մանկավարժական համալսարանի դիմաց -դեկորատիվ ջրավազան 10. Սունդուկյանի թատրոնի հետնամաս –դեկորատիվ ջրավազան

	11. Մանկական երկաթուղու դեկորատիվ ջրավազան 12. Հանրապետության հրապարակ- դեկորատիվ ջրավազան 13. Նախարարությունների շենքի դիմաց- դեկորատիվ ջրավազան 14. Երևանյան լիճ-«Լճափ» բենզալցակայանի հարևանությամբ 15. «Շողակաթ» հ/ը հարևանությամբ- դեկորատիվ ջրավազան 16. Գ.Նժդեհի հրապարակ - դեկորատիվ ջրավազան 17. «Վարդավառի» լիճ 18. Ազատամարտիկների այգի- դեկորատիվ ջրավազան 19. Անդրանիկի 74-դեկորատիվ ջրավազան 20. «Արմենիա» ՀԲԿ-ին կից -դեկորատիվ ջրավազան 21. Հրազդան գետ - Քանաքեռ ՀԵԿ-ի հատված 22. Հրազդան գետ-Կիևյան կամրջի տակի հատված /Հալաբյան փողոցի կողմից/ 23. Հրազդան գետ-Դավթաշեն կամրջի տակի հատված 24. Քանաքեռ ՀԷԿ- ջրամբարի սկզբնամաս 25. Քանաքեռ ՀԷԿ- ջրամբարի վերջնամաս,Քանաքեռ ՀԷԿ 26. Քանաքեռ ՀԷԿ-ը սնուցող ջրանցք, Կորեայի ձոր փոքր կամրջի տակ 27. Վ. Դավթյանի անվան զբոսայգի- դեկորատիվ ջրավազան 28. Հաղթանակի զբոսայգի- լճակ 29. Գայի արձանի դիմաց- դեկորատիվ ջրավազան 30. Դ. Անհաղթի այգի- դեկորատիվ ջրավազան 31. «Միկ մետալ» ջրավազան
«Տավուշ» մասնաճյուղ – 6 կետ	1.Քարի լիճ - գ. Հովք 2.գետ Ուրթի - գ. Գանձաքարի վերջնամաս 3.Զբոսայգու լիճ – ք. Իջևան 4. Զբոսայգու լիճ – ք. Դիլիջան 5.գետ Տավուշ – ք. Բերդ մինչ բնակավայրը 6. գետ Բարանա – ք. Նոյեմբերյան
«Արմավիր» մասնաճյուղ -6 կետ	1. Սև ջուր գետ (Լուսագյուղի կամրջի աջ կողմը) 2. Քասախ գետ (Արշալույս համայնքի կամրջի աջ կողմը) 3. Ակնալիճ համայնքի լիճ 4. Լողալու լիճ (Զարթոնք համայնք) 5. Ք. Արմավիր Ջրաշխարհ 6. Նախկին ձկնաբուծական լճեր (Զարթոնք համայնք)
«Կոտայք» մասնաճյուղ -30 կետ	1.Հրազդան գետ՝ մինչև Մարմարիկ գետին խառնվելը 2.Մարմարիկ գետից մինչև Հրազդան գետ թափվելը 3.Տանձաղբյուր գետից մինչև Հրազդան գետ թափվելը 4. Հրազդան լճից 5.Քաղսիի մաքրման կայանից կեղտաջրերի Հրազդան գետ թափվելու

	կետից 500-800մ ներքև 6.Հրազդան գետ, Արզնի թիվ 2 առողջարան 7.Հրազդան գետ, <<Արզնի>> ՀԷԿ 8.Գետակ գետառ 9. Մայակովսկու գետ 10.Գառնիի ձոր/ հանգստյան տուն 11. Հրազդան գետ գ. Գետամեջի մոտ 12. Արզնի –Շամիրամ ջրանցք՝ մուտք գ. Նոր-Գեղի 13.Արզնի –Շամիրամ ջրանցք՝ ելք ք. Եղվարդ 14.Հրազդան գետ՝ Բջնի գյուղի սկզբնամաս 15.Հրազդան գետ՝ Բջնի գյուղի վերջնամաս 16.Հրազդան գետ՝ Գյումուշի ՀԷԿ 17.Դալար գետ՝ <<Մասիս>> պանսիոնատ 18.Դալար գետ՝ <<Անուշ>> պանսիոնատ 19.Դալար, Հրազդան գետերի միացման կետ 20. Հանքավան «Անի ռեզորթ» հանգստյան տուն 21. Աղվերան «Արարատ ռեզորտ» հանգստյան տուն 22. Ծաղկաձոր «Ծաղկահովիտ հյուրանոց» 23. Աղվերան «Արթուրս» հանգստյան տուն 24. «Բեստ Վեստերն Աղվերան» հյուրանոց 25. Ծաղկաձոր «Մարիոթ» հյուրանոց 26. Ծաղկաձոր «Սաթի հանգստյան տուն» 27. Աղվերան «Ոսկե գետակ» հանգստյան տուն 28. Աղվերան «Ալպիական մանուշակ» հանգստյան տուն 29. Հանքավան «Մարմարիկ» հանգստյան տուն 30. «Աղվերան պարկ» Ռեզորթ հանգստյան տուն
«Արագածոտն» մասնաճյուղ - 7 կետ	1. Գալուստի ձոր 2. Սաքոյի ձոր 3. Կարբիի ձոր 4. Արծվի թևեր 5. Օշականի ձոր 6. Բազմաղբյուրի հանգստի գոտի 7. Փարպիի հանգստյան գոտի
«Շիրակ» մասնաճյուղ -7 կետ	1.Չերքեզի ձոր -հանգստի գոտի /ք. Գյումրի/ 2.Վարդ բաղի հանգստի գոտի /ք. Գյումրի/ 3.Մայր Հայաստան հանգստի գոտի /ք. Գյումրի/ 4. Իլլի գետակ հանգստի գոտի 5.Մարմաշենի ջրամբար հանգստի գոտի 6.Սառնաղբյուրի ջրամբար հանգստի գոտի 7. Արփի լիճ

«Վայոց Ձոր» մասնաճյուղ – 10 կետ	1.Եղեգիսի վտակ քՍ.Եղեգնաձոր 2.Խառնուրդ քՍ.Եղեգնաձոր 3.Գետ Արփա քՍ.Եղեգնաձոր 4.Գետ Արփա քՍ.Եղեգնաձոր 5.Գետ Արփա գ.Մալիշկա 6.Ագարակաձորի վտակ՝ Գռավ գ.Ագարակաձոր 7.Հարունի կամուրջ քՍ.Վայք 8.Ազատեկի կամուրջ գ.Ազատեկ 9.ՀԷԿ քՍ.Վայք 10.Հախլու քՍ.Վայք
«Սյունիք» մասնաճյուղ -16 կետ	1. ՔՍ. Կապան, Վահանավանքի տարածք -Ողջի գետ 2. ՔՍ. Կապան, Նժդեհի փողոց <<Կարապետի գյոլ>> բաց ջրավազան-Վաչագան գետ 3. ՔՍ. Կապան, Ա. Մանուկյան փողոց <<Խաչմերուկ>> դեկորատիվ ջրավազան 4. ՔՍ. Կապան , Ա. Մանուկյան 1 նրբանցք <<Ֆենիքս>> ՍՊԸ-ի դեկորատիվ ջրավազան 5. ՔՍ. Կապան, Վազգեն Սարգսյան հրապարակ դեկորատիվ ջրավազան 6. ՔՍ. Կապան, Նորաշենիկի մայրուղի <<Ջաղաց>> ՍՊԸ-ի հանգստի գոտու տարածք-Նորաշենիկ գետ 7. ՔՍ. Կապան Նորաշենիկի մայրուղի <<Աճանան>> ՍՊԸ-ի տարածքի մոտ -Նորաշենիկի գետ 8. ՔՍ. Կապան Նորաշենիկի մայրուղի <<Վաչիկի մոտ>> ՍՊԸ-ի հանգստի գոտի-Նորաշենիկի գետ 9. ՔՍ. Կապան Նորաշենիկի մայրուղի <<Ձանգակ>> հանգստի գոտի-Նորաշենիկի գետ 10. գ. Ներքին Հանդ <<Սոսիների պուրակ>> - Ծավ գետ 11. ՔՍ. Կապան Վաչագան բանավան <<Ոսկան>> ՍՊԸ-ի հանգստի գոտի մոտ - Վաչագան գետ 12. ՔՍ. Գորիս <<Սդղին>> գյոլ ջրամբար 13. ՔՍ. Գորիս <<Հայրենական Մեծ Պատերազմի>> հուշակոթողի դեկորատիվ ջրամբար 14. ՔՍ. Գորիս Գ.Տաթևացի հրապարակի դեկորատիվ ջրավազան 15. ՔՍ. Սիսիան Սիսիականի փողոց դեկորատիվ ջրավազան 16. գ. Հացավան ՄՋԱ Ռեսորթ հանգսի գոտու դեկորատիվ ջրավազան
«Արարատ» մասնաճյուղ -11 կետ	1. Գ. Հովտաշեն, պոմպակայանի մոտ 2. ՔՍ. Մասիս-գ. Ռանչպար, պոմպակայանի տարածք 3. Մեծամոր գետ, գ. Սիսի տարածք

	4. Արտաշատյան լիճ 5. Ազատ գետ, քլորակայանի տարածք 6. Ազատ գետի ջրամբար /գ. Լանջազատի վարչական տարածք/ 7. Ազատ գետ-գ. Արևշատ 8. Ազատ գետ-գ. Լանջազատ 9. Ազատ գետ- Արևշատ-Կանաչուտ 10. Վեդի գետ-ք. Վեդի-Գոռավան /կամրջի մոտ/ 11. Վեդի գետ – գ. Ուրցաձորի տարածք
«Լոռի» մասնաճյուղ -12 կետ	1.Գետ Վանաձոր-մինչև քաղաք մտնելը 2. Գետ Տանձուտ-ք.Վանաձոր,Առափնյա փողոց 3. Գետ Փամբակ-ք.Վանաձոր,եկեղեցու մոտ 4. Արհեստական լիճ-ք.Վանաձոր 5. Գետ Սպիտակ-գյուղ Շահումյան 6. Գետ Փամբակ-ք.Սպիտակ,ալրաղաց կոմբինատի մոտ 7. Գետ Հանքաձոր-գյուղ Դեբեդ 8. Լիճ «Ծովեր»- գ.Դսեղ 9. Գետ Դեբեդ- ք.Ալավերդի,Սանահին կայարան 10. Ք. Ստեփանավան, Տաշիրի ճանապարհին - լիճ 1 11. Ք. Ստեփանավան, Տաշիրի ճանապարհին - լիճ 2 12. Գետ Ձորագետ-ք.Ստեփանավան, հին կամրջի մոտ